ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ.-ի թվականի մայիսի 3-ից 15-ը
Մոլդովայի Հանրապետություն
ք. Քիշնև
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Արման Մարության- ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի ավագ մաքսային տեսուչ,
   Վահան Օհանյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչ /Ժ.Թ.Պ/
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Մոլդովայի Հանրապետություն ք. Քիշնև, 2024թ.-ի թվականի մայիսի 3-ից 15-ը:
3. **Հրավիրող կողմը.**
   Հրավերը ստացվել է 20.02.2024թ.-ին Մոլդովայի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային ծառայության տնօրեն պարոն Իգոր Թալմազանից:
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Գործուղումը նախատեսված էր «հակաթմրանյութեր, հակածխախոտ, կանխիկ փող և պայթուցիկ նյութեր» թեմաներով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով:
5. **Քննարկված թեմաները.**
   Գործուղման ընթացքում քննարկվել են ստորև ներկայացված թեմաները
   - Ժամանակակից տարբեր ձևաչափերով շնավարժության մեթոդաբանության խելացի և նորարարական տեխնոլոգիաների ներդրումը շների աշխատանքում, մասնավորապես՝ հաշվի է առնվել և ուսումնասիրվել է թմրանյութերի, ծխախոտի, կանխիկ փողի և պայթուցիկ նյութերի կանխման չեխական և ֆրանսիական մեթոդաբանությունը:
   - Շնավարժության հիմունքների հարցերն ու պատասխանները,
   - Շների վարքի և վարժեցման ֆիզիոլոգիայի հիմունքները,
   - Շների վարժեցման ընթացքում կիրառվող խթանիչները (գրգռիչները),
   - Շների աշխատանքը հեշտացնող և բարդացնող պայմանները,
6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Մոլդովայի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային ծառայության տնօրեն պարոն Իգոր Թալմազանի, Մոլդովայի Հանրապետության շնագիտական ծառայության ղեկավար պարոն Վիկտոր Պոպովիչի, ինչպես նաև՝ Մոլդովայի և Ուկրաինայի Հանրապետության մաքսային ծառայության աշխատակիցների, սահմանապահների և սահմանակետում ծառայություն իրականացնող շնավարժների հետ:
   Քննարկվել են շնավարժության գործունեության առանձնահատկությունները: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են մաքսային ծառայությունների շնագիտական կենտրոնների ծառայողական շների ուսուցման մեթոդաբանությունները, թմրամիջոցների դեմ պայքարի և անդրազգային սահմանային հանցագործությունների դեմ պայքարի ապագայի

հեռանկարները, թմրանյութերի և հոգեմետ դեղերի, զենք-զինամթերքի և պայթուցիկ նյութերի, թութունի և թղթադրամների հայտնաբերման ոլորտում զարգացումները, նախատեսվող բարեփոխումները, մաքրացեղ շների բուծման և վարժեցման ծրագրի մարտահրավերներն ու առավելությունները:

Գործուղման ընթացքում տեղի է ունեցել նաև պրակտիկ դասընթաց Մոլդովայի և Ուկրաինայի հանրապետության պետական սահմանում, ուսումնասիրվել են տեղի շնավարժների աշխատանքային առանձնահատկությունները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Գործուղումը նախատեսված էր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով, հետևաբար որևէ նոր որոշում չի ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել: Վերապատրաստման դասընթացի ավարտին տրվել է համապատասխան սերտիֆիկատ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Գործուղման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ Մոլդովայի Հանրապետության շնագիտական ծառայության աշխատակիցների հետ մշտապես և հեռավար եղանակով իրականացնել աշխատանքային փորձի փոխանակում և կատարել տարբեր քննարկումներ՝ կապված շնավարժության գործունեության հետ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Արման Մարության

Վահան Օհանյան

«16» մայիսի 2024թ.